13. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու կամ էլեկտրոնային փոստի միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

### VI. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

14. Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ

1) Պայմանագիրը համարվում է պատշաճ կերպով կնքված և իրենց համար ունի պարտադիր իրավաբանական ուժ,

2) Պայմանագիրն իրենց համար հանդիսանում է իրական, պարտադիր և իրագործելի,

3) պատրաստ են իրականացնել Պայմանագրից բխող իրենց պարտավորությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները,

4) Պայմանագրի կնքումը և կատարումը չի խախտում որևէ այլ պայմանագրի պահանջ, որում Կողմերը միասին կամ յուրաքանչյուրն առանձին հանդես են գալիս որպես կողմ, ինչպես նաև երրորդ անձանց որևէ իրավունքներ,

5) Պայմանագիրը համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը, իրենց համար պարզ և ընդունելի են Պայմանագրի կնքման և դրա չկատարման իրավական հետևանքները:

### VII. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

15. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

16. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

### VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ»

17. Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև լիիրավ համաձայնություն՝ դրանում արտացոլված դրույթների վերաբերյալ:

18. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Պայմանագրի մեկնաբանման, ինչպես նաև այլ պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

19. Կողմերի միջև այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կարգավորվում են Կողմերի համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

20. Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է Կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ Պայմանագրով:

21. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի (նրանց լիազոր ներկայացուցիչների) կողմից:

22. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետի ավարտը: Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունները պատշաճ կատարելու պարտավորությունից:

23. Տարածքային կենտրոնը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և վաղաժամկետ լուծել այն, եթե Պայմանագիրը կնքելուց Շահառուն չի ընդունվել աշխատանքի Գործատուի մոտ՝ առնվազն Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետով կամ Գործատուն և (կամ) Շահառուն թույլ են տվել Պայմանագրի էական խախտում:

24. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակներից, որոնցից Տարածքային կենտրոնին, Գործատուին և Շահառուին տրամադրվում է մեկական օրինակ:

### IX. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Տարածքային կենտրոն՝**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության

__________ ՄՍԾ ԳՅՈՒՄՐԻ ՏԿ

(Տարածքային կենտրոնի անվանումը)

տարածքային կենտրոն

Գտնվելու վայրը՝ ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ 46Ա
Հեռ. 0605[illegible]099/745
Էլ. փոստ Karen [illegible]khasyan@socservice.am

Ի դեմս __________ ՏՆՕՐԵՆ ՍԱԼԽԱՍՅԱՆ ԿԱՐԵՆ

(Տարածքային կենտրոնի լիազորված անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

Կ.Տ. «29» Սեպտեմբերի 2021

**Գործատու՝**

__________ ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ ԱՁ

(Գործատուի անվանումը)

Գտնվելու վայրը՝ Մարզ ՇԻՐԱԿԻ Քաղ. ԳՅՈՒՄՐԻ Համ. ԳՅՈՒՄՐԻ Փող. ԳՈՐԿԻ Տուն 74/3
Հեռ. 093929198
Էլ. փոստ mkrtchyanimage@gmail.com
Հ/հ 220549670598000
ՀՎՀՀ 57396008
Ի դեմս __________ Վարիչ (տնօրեն)՝ կարի արհեստանոցի ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՍՄԻԿ

(Գործատուի լիազորված անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

__________

(ստորագրությունը)

Կ.Տ. «29» Սեպտեմբերի 2021

**Շահառու՝**

ԵՂՈՅԱՆ ՎԻԿՏՈՐՅԱ

(ազգանունը, անունը)

Բնակության վայրը՝ Հանր. ՀԱՅԱՍՏԱՆ Մարզ ՇԻՐԱԿԻ Քաղ. ԳՅՈՒՄՐԻ Համ. ԳՅՈՒՄՐԻ Փող. [illegible] Տուն 104/579